Поддержать Պահել, աջակցել. սատարել, սատար լինել. զորավիգ լինել. նեցուկ լինել
— атаку սատարել, աջակցել գրոհին (ճել
— данное направление տված ուղղությունը պա-
— полосу сопротивления զորավիգ լինել, սատար լինել դիմադրության շերտին
— порядок կարգ պահել (պահել
— связь, тесную связь կապ պահել, սերտ կապ
Поддержка Սատար. սատարություն. աջակցություն. զորավիգ. նեցուկ
— взаимная փոխադարձ սատարություն, աջակ-
— взводная դասակի զորավիգ (ցություն
— дома տան նեցուկ (չակցություն
— стрелковая հրաձգական սատարություն, ա-
Оказывать поддержку աջակցել, սատարել, սատար լինել
Подъем Բարձրացում, բարձրացնելը. վերելք տեղից վեր ելնելը. վեր կացնելը զարթ, զարթնելը տեղափոխություն վեր, զառիվեր, զառիվերս ամբարձիչ, վերամբարձ մեքենա. բարձրացնող ձող
— винтовой պտուտակավոր վերամբարձ մեքենա, բեռնամբարձ, տ. Домкрат
— в поход յերթի, ռազմերթի ելնելը, յելուտ, տ. выступление, выступить в поход

— духа *վոգեվորություն*
— крутой *ուղղորդ վերելք, ուղղորդ զառիվեր*
Утомленный под'емом *վերելքից հոգնած*
— полевой артиллерии *դաշտային հրետանու ամբարձիկ, բարձրացնող լծակ*
— с ночлега, с бивака, с привала *գիշերօթից, բանակատեղից, դադարից չվելը, չվում, տ.* выступление, выступить с ночлега, с'емка с ночлега. *(տեղից վեր կենալը*
Утренняя заря и под'ем *այգածագ յեվ*
Деньги на под'ем *տեղափոխության դրամ, տ.* под'емные деньги
Под'емный *Վերամբարձ բարձրացնողի*
—ая вила *վերամբարձ յերկաբձն*
—ый винт *վ. պտուտակ*
—ые деньги *տեղափոխության դրամ*
—ый клин *վ. սեպ*
—ый кран *վ. կռունկ (մեքենա)*
—ые лошади *գումակի ձիեր*
—ая машина *վերամբարձ մեքենա*
—ый механизм *վ. մեխանիզմ*
—ый мост *բարձրացնովի կամուրջ*
Подког *Հրձգություն, կրակ ձգելը, կրակ տալը*
Подземелье *Ստորերկրյայք, ստորերկրյա փապար*
Подземный *Ստորերկրյա*
—ая война *ս. պատերազմ, ականային պատե-*
—ая казарма *ս. զորանոց* *(բազմ*
—ый провод в тыл *ս. անցք (ճանապարհ) դեպի թիկունքը* *(թշնամու)*
Подзор *Դարանից դիտելը, դարանակալ դիտել*

Подзорная башня Դիտակման աշտարակ
—ая вышка դիտանոց
—ая труба դիտակ
Подзорщик Դարանադետ
Подкладная шайба Տակի տափօղակ
Подкова Պայտ
— гладкая հարթ պ.
— с захватом ճանկավոր (յեռաճանկ) պ.
— с шипами գգեռավոր պ.
Подколенник Ծնկաբարձ
Подкоп Ական, ա. мина ‖ ականահատություն
Подкопать, подкапывать Ական հատել, ականա-
— крепость ա. բերդը (հատել
— могилу գերեզման հատել
— стену ա. պատը (պատի մեջ)
Подкопаться, подкапываться Ականներով մոտե-
նալ ‖ տակերկրյա անցք փորել
Подкос Դիմադիր (թեկ մույթ) ‖ ծագ սյուն
Подкрепить Ամրացնել ‖ զորացնել
— дух войск զորքերին ոգեպնդել, սրտապնդել
— караулы պահակները զորացնել (դիրքերով
— мост подкосами կամուրջն ամրացնել դիմա-
Подкрепление Ամրացում ‖ զորացում ‖ զորամիգ-
օգնականություն
Служить —нием զորամիգ լինել
Подлинник Բնագիր (մրնկապան
Подлокотник станка пулемета Գնդացրակալի որ-
Подмастер, подмастерье Վարպետի օգնական
— оружейный զինագործի օգնական

Подметка Կոշկատակ

Подкинуть —ки под сапоги կոշիկների տակը գցել, կոշիկների տակ գցել

Подмога Օգնություն

Подмостки Լաստամ՝ (շենքեր շինելու լաստակերտ)

Подмышка Անութ, կռնատակ

Поднимать, поднять Բարձրացնել ‖ վերցնել ‖ վեր կացնել

(ոգեվորել

— дух войска զորքի ոգին բարձրացնել, զորքին

— руку вверх ձեռքը վեր բարձրացնել

— пехоту до рассвета հետևակին լուսաբացից առաջ վեր կացնել

(բարձել

— орудие на лафет հրանոթը հրետանային վրա

Подножье Ստորոտ ‖ պատվանդան ‖ խարիսխ

— горы լեռան ստորոտ

— колонны սյան խարիսխ

Подножка, подножная доска Ոտնադիր (կառքն ամբողջ՝ բարձրանալու համար)

Подножный корм Արոտ

Поднос, подноска патронов, снарядов Փամփուշտներ, արկեր բերելը, մոտ կրելը

Подносчик патронов Փամփշտակիր

Подозрение Կասկած

Подорвать ст. подрывать

Подотдел Ենթաբաժին

Подочередной Ենթահերթ (ական)

Подочередь Ենթահերթ

Подошва Ներբան, վոտքի տակ, կինք ‖ ստորոտ

— амбразуры հրակնատի ստորոտ

— внутренней крутости бруствера պատվարի ներքին (ներսի) զառիթափի ստորոտ

— горы *լեռան ստորոտ*

— наружной отлогости бруствера *պատվարի արտաքին զառիվայրի ստորոտ*

— ноги *վոտքի ներբան. գնիր*

— обуви *վոտնամանի ներբան, տակ*

— стены *պատի տակ*

Подошвенная кожа *Ներբանի, կոշկատակի կաշի*

Подписание *Ստորագրություն-ստորագրում,ստո-*

Подписать *Ստորագրել* *(բագրկը*

—ться *ստորագրվել*

Подписка *Ստորագրություն, տ.* расписка

Подпись *Ստորագրություն ‖ ստորագիր ‖ մակագիր, տ.* надпись

— на планах и картах *ստորագիր (մակագիր) ճատակագծերի, պլանների լեվ քարտեզ-*

Подползти *Մոտ սողալ* *(ների վրա*

Подполковник *Փոխ-գնդապետ* *(նություն*

Подпора, подпорка *Նեցուկ, ճեցուկ, գինձար ‖ ոզ-*

Подпорная стена *Հենապատ, նեցուկ պատ*

Подпоручик *Փոխ-տեղակալ (սպայական աստի-*

Подпочвенная вода *Գետնատակի ջուր* *(ճան*

Подпрапорщик *Փոխ-սպա*

Подпруга *Փորքաշ. Թափոտր* *(Թամբի գոտի*

— верхняя *Թամբակալ, Թանգ. Թամբի փորքաշ.*

— вьючная, помочная *բեռան փորքաշ*

— к вьючным седлам *ճամետակալ, ճամետի փորքաշ, Թափառեր*

Подтягивать подпругу *փորքաշը քաշել*

Распустить подпругу *փորքաշն արձակել*

Подпруживать Փորաքաշը կապել
Подразделение Ստորաբաժանում
Подручный Ձեռքի տակ յեղած (ունեցած), առձեռն, առձեռն պատրաստ
—ая лошадь (при оглобельной упряжи) կողքի լծած ձի (բաշտաններով լծվածքի մեջ). ա. пристяжная лошадь (ձեռքի ձի
—ая лошадь переднего уноса (в выносе) ճոքիկի
—ый материал առձեռն, ձեռքի տակ յեղած նյութ
(մաս
—ая часть առձեռն, ձեռքի տակ յեղած զորա-
Подрыв, подрывание Պայթեցում || քայքայում, պատառում
(քնա
Машина для подрывания պայթեցնող մե-
Подрывать, подорвать Ականահատել, տակը փորել || պայթեցնել
— дух неприятеля Թշնամու ոգին ընկճել
— наступательный порыв неприятеля Թշնամու հարձակողական թափը կոտրել
— нравственные силы противника Հակառակորդի բարոյական ուժերը խորտակել, ջլատել
— стену крепости բերդի պարիսպը ականահատել,
Подрывник Պայթեցնող (պայթեցնել
Подрывный Պայթուցիկ, պայթեցնող
—ая гильза պայթուցիկ պարկուճ
—ое имущество պայթուցիկ գույք
—ая команда պայթեցնող խումբ
—ая мина պայթուցիկ ական
—ые работы պայթեցման աշխատանքներ, փոր-
Подряд Կապալ
(վածքներ

Подрядчик Կապալառու

Подседельная лошадь переднего уноса (в выносе) Հո-
    րեկի թամբի ձի, հեծնելու ձի

Подставка, подстановка Նեցուկ

— для сигнального рожка ազդափողի նեցուկ

— дышловая, под дышло ատեղի նեցուկ

Подставной Փոխ, փոխնակ

—ые лошади փոխձիաներ

—ой рекрут, подочередной рекрут փոխնակ նո-
    րագին, յենթահերթ նորագին

Подстольный магазин Փոխստակի պահեստարան

Подстилка Փռոց, փռվածք, տապաստ

Подстрекать армию к возмущению Բանակը գըր-
    գել խռովության անելու, վառարանջելու

Подстрекатель Սադրիչ, գրգիչ

Подступы Մատույցներ, տ. апроши

— скрытые ծածուկ մ. (ճողի խրամի մ.

— траншеи атакующего крепость բերդի վրա գրո-

Подсумок кожаный Կաշվե փամփուշտաման, փամ-
    փուշտի պայուսակ, տ. патронная сумка

Подток древка Զողատակ (դրոշի) (մոտեցնել

Подтягивать, подтянуть Մոտ քաշել, մոտ բերել.

— резервы ռեզերվները մոտ քաշել

Подтяжки Զգոց || տարատակալ, տարատաձիգ,

Подушка Բարձ (տ. помочи

— осевая, осьная, оси առանցքաբարձ

— хоботовая ռատատամի բարձ

— хомута անուրի,* խամութի բ.

Подхвостник Ագետակի փոկ (ձիասարքի)

Подход к полю сражения Մոտեցում, մոտենալը
    ճակատամարտի դաշտին

Подчинение Ստորադրութիւն. ենթարկում
— беспрекословное Առանց առարկութեան, անխօս ենթարկվելը
Полное — воле начальника լրիվին. կատարելապես ենթարկվելը պետի կամքին
Подчиненность Ստորադրելութիւն, ստորադասութիւն (ղասութեան կարգով
По —ти или по порядку —ти ստորա-
По команде в порядке —ти վերադասու-
Подчиненный Ստորադրեալ (թյան կարգով
— непосредственный անմիջական ս. (բաղրիկել
Подчиниться Ստորադասվել, Նվիրվել, ենթարկվել, ստո-
Подшейник, шейный ремень Վզափոկ (ձիու)
Подшипник осевой Առանցակալ
Подымающаяся галлерея Բարձրացող ստորանցք
Поединок Մենամարտ, ռ. дуэль
Поезд Գնացք || կառատորմ. այլատորմ
— блиндированный զրահապատ գնացք
— железной дороги յերկաթուղու գնացք
— пассажирский մարդատար գնացք
— санитарный սանիտարական գնացք (գնացք
— товарный ապրանքատար, ապրանքակիր
— торжественный Հանդիսավոր յերթ, թափոր, շքերթ (կառքով)
Поездка с ученою целью Ուղեվորութիւն (առաք) գիտական նպատակով, ռ. экспедиция
Поза Դիրք. դրվածք. կեցվածք (մարմնի)
Позиционный Դիրքի, դիրքային
—ая война դիրքային պատերազմ
—ый участок դիրքի տեղամաս

Позиция Դիրք
— выгодная ձեռնտու դ․
— выжидательная սպասողական դ․
— для убежища ապաստանի դ․
— заблаговременно укреплённая վաղօրօք ամ-
— закрытая գոց, ծածկված դ․ (բացված դ․
— запасная պահեստի, պահեստի դ․
— короткая նեղաճակատ դ․
— наблюдательная или обсервационная դիտո-
— неприятельская թշնամու դ․ (զակին դ․
— полузакрытая կիսածածկված դ․
— поспешно укреплённая շտապ ամրացրած դ․
— стрелковая հրաձգութեան դ․
— траверсная խոտորնակի, շեղակի դիրք․ շե-
— укреплённая ամրացրած դ․ (դաշիրք
— уступная սանդղաձեւ դ․
— фланговая թեւային դ․
— фронтальная ճակատային դ․
— широкая լայնաճակատ դ․

Занять позицию դիրք բռնել, դիրք մտնել

Позиции служебные Ծառայութեան վերաբերեալ
փաստաթղթեր (Թյուն } կեղտանուն

Позор Անարգանք, նախատինք, խայտառակու-

Поиск Որոնում || Հետախուզում

Дальние —ки кавалерии Հեծելազօրի հե-
ռաւոր հետախուզումներ

—ки разведчиков Հետախուզների որոնումներ

Показание Ցուցմունք

Показная съемка Ցուցական հանութ

— стрельба ցուցական հրաձգութիւն

Покатость Զառիվայր, զառիվեր (զոյ․)

— крутая ուղղորդ զ.

— рва փոսի զ.

Покатый Զառիվայր (ած.), զառիթափալ

—ый берег զ. ափ

—ая местность զ. տեղանք

—ое место զ. տեղ

Покой Հանգիստ, հանգստություն || սենյակ || П (տառի անունը)

— приемный հիվանդների ընդունարան

Расположиться покоем П տառի ձևով դասավորվել

Поколебать Շարժել. դղրդեցնել, հոդդողել. տատանել

— нравственные силы неприятеля Թշնամու բարոյական ուժերը դղրդեցնել

Покорение Նվաճում

Покоритель Նվաճող

Покорность Հնազանդություն || խոնարհություն

Покрой Ձև, տարազ

Покрывало Ծածկոց. ծածկույթ || վերմակ

Покрытие Ծածկելը || ծածկոց || խուփ

Покрышка Ծածկ (տան). ծածկոց. խուփ

— для замка орудия հրանոթի փականքի ծածկոց, շապիկ

Надульная — орудия հրանոթի բերանի ծածկոց, բերնակալ, տ. дульная покрышка

— огнестрельного оружия հրազենի ծածկոց

Покупка Գնում

Покушение Փորձ, հանցափորձ || վոտնձգություն

— на преступление հանցափորձ, հանցագործության փորձ

— на убийство սպանության փորձ

— на жизнь *կյանքի դեմ հանցափորձ, մահա-*
Пол *Հատակ* *(փորձ*
Пол *Կես* *(ման տալ*
Подать команду в пол-голоса *կիսաձայն հրա-*
Пол вперед, очередь! *(հրամ.) Կես խաղ առաջ, հե՛րթ։*
Տես пол-оборота, пол-круга, пол-шага и полу-
Полагать *ս.* положить *Դնել || կարգել. սահմանել || հատկացնել || համարել*
— в командировке *գործուղման մեջ համարել*
—ся по штату *հաստիքով սահմանված լինել*
Положенное довольствие *սահմանված բա-վարարում* *(չե կրել*
Ружей не положено *հրացան սահմանված*
Поле *Դաշտ, ռազմադաշտ || ար. || յեզր*
— боя *մարտի դաշտ, մարտադաշտ*
— битвы, — сражения *ճակատամարտի դաշտ*
— видимости и невидимости *տեսության (տե-սանելի) յեվ անտեսության (անտեսանելի)*
— военное *ռազմադաշտ* *(դաշտ*
— зрения *տեսողության դաշտ*
— зрения отражателя *անդրադարձիչի տեսողու-թյան դաշտ, սահման* *(զենքի փողի)*
— между нарезами *ար. ակոսների միջեվ (հրա-*
Диаметр канала по полям *փողանցքի տրա-մաչափ առից ար., առերից հաշված*
— полета снаряда *արկի թռիչքի դաշտ*
— стрельбы *հրաձգության դաշտ*
— чести *պատվի դաշտ, մարտի դաշտ*

— шляпы գլխարկի եզր

Шляпа с широкими полями լայնեզր գլխարկ

Остановиться лицом в — կանգնել՝ յերեսը դեպի դաշտ.

Поворачивать ружье стволом в — հրացանը դարձնել՝ փողը դեպի դուրս (դաշտ).

Поставить шашку отвесно острием в — թուրն ուղղահայաց պահել՝ բերանը դեպի դուրս (դաշտ).

Ружье держать ружейным ремнем в — հրացանը բռնել՝ հրացանի փոկը դեպի դուրս (տափ) դարձրած.

Полевой Դաշտային, ռազմադաշտային

—ая артиллерия դ. հրետանի

—ая батарея դ. մարտկոց

—ой бинокль դ. բինոկլ, յերկդիտակ

—ой военный суд դ. ռազմական դատարան

—ая война դ. պատերազմ

—ые войска դ. զորքեր

—ой госпиталь դ. հիվանդանոց

—ое донесение դ. զեկուցում, տեղեկագիր

—ая дорога դ. ճանապարհ

—ой инженер դ. ճարտարագետ

—ой инженерный парк դ. ճարտարագիտական

—ой инспектор դ. տեսուչ (պարկ, կրանք

—ой интендант դ. համբարակ

—ой казначей դ. գանձապետ

—ое казначейство դ. գանձարան

—ой караул դ. պահակ

—ая книжка դ. գրքույկ

—ой контроль գ. վերստուգություն
—ой лазарет գ. լազարեթ
—ой лафет գ. հրետասայլ
—ое орудие գ. հրանոթ
—ой полк գ. գունդ
—ая почта գ. փոստ, թղթատարություն
—ая работа գ. աշխատանք
—ая сумка գ. պայուսակ
—ой телеграф գ. հեռագիր, հեռագրատուն
—ой телефон գ. հեռախոս
—ое укрепление գ. ամրություն
—ое управление գ. վարչություն
—ое учение գ. վարժություն (թյուն
—ая фортификация գ. ամրություն, ամրաշինու-
—ые фугасы или торпедо գ. փուգասներ կամ
տորպեդոներ
—ая хлебопекарня գ. հացի փուռ (թյուն արկի
Полезная дальность снаряда Օգտակար հասողու-
—ое действие пороха օգտակար ներգործություն
Полено Ծղան (փայտ) (վառելի
Полет Թռիչք
— пули գնդակի թ.
— снаряда արկի թ.
Ползун Սողուկ (նակի ս.
— пулемета, револьвера գնդացրի, ատրճա-
Полигон, многоугольник Պոլիգոն, բազմանկյունի,
հրաձգարան, ա. стрельбище
— крепостной или крепостной многоугольник
բերդային բազմանկյունի, բերդային հրաձ-
գարան (կան հրաձգարան
— учебный артиллерийский հրետանային վարժա-

Полигонная стрельба Պոլիգոնային, բազմանկյունային հրաձգություն

—ый фронт պոլիգոնային, բազմանկյունի ճակատ

Полировальная бочка (վառոդի) Հղկելու տակառ

Полировать Հղկել

Полировка Հղկում

— пороха վառոդի հ.

— снаряда հրանոթի հ.

Полировщик Հղկիչ

Политическая демонстрация Քաղաքական ցույց

Полиспаст Բազմաճախարակ

Полицейский Ոստիկան || ոստիկանական

—ий агент ոստիկանական գործակալ

—ий порядок ոստիկանական կարգ

Полицеймейстер Ոստիկանապետ

Полиция военная Ռազմական ոստիկանություն

Полк Գունդ, զորագունդ

— армейский բանակային գ.

— боевой մարտիկ, քաջամարտիկ գ.

— военно-милиционный ռազմա-միլիցիական գ.

— запасный պահեստի գ.

— инженерный ճարտարագիտական գ.

— кавалерийский հեծելագունդ

— кирасирский զրահավոր հեծելագունդ

— конный ձիավոր, հեծյալ գ.

— милиционный միլիցիական գ.

— пехотный հետևակ գ.

— полевой դաշտային գ.

— сводный համահավաք գ.

— стрелковый հրաձիգ գ.

Полка Դարակ ‖ խանձոց (հրացանների)
Полковник Գնդապետ
Полковой Գնդի
—ой адъютант գ. համհարզ
—ая артиллерия գ. հրետանի
—ая библиотека գ. գրադարան
—ой горнист գ. փողհար
—ой журнал գ. մատյան
—ое знамя գ. դրոշ
—ой караул գ. պահակ
—ой клуб գ. ակումբ
—ая колонна գնդասյուն
—ая мастерская գ. արհեստանոց
—ой резерв գ. օժանդակ
—ой суд գ. դատարան
управление —а գ. վարչություն
—ое хозяйство գ. տնտեսություն
—ой штаб գ. շտաբ
—ая штаб-квартира գ. բնակատեղ
Пол-круга Կես շրջան, կիսաշրջան
Полный Լի, լիքը, լրիվ. լիակատար. կատարյալ
—ый аллюр լրիվ քայլ
—ая аммуниция լրիվ հանդերձանք
—ая дальность полета թռիչքի լրիվ հեռավորություն
—ая дистанция լրիվ հեռավորություն
—ый интервал լրիվ միջանց
—ый курс լիակատար դասընթաց (տեր
—ое навьючивание լրիվ բարձելը, բեռնելը գրաս-
—ый оклад жалованья ռոճիկի լրիվ կարար ‖ լրիվ
—ая победа կատարյալ հաղթություն (ռոճիկ
—ый ряд յիրկյակ

—ый ход *լի ընթացք*
—ый шаг *լի քայլ*
Итти полным шагом *լիաքայլ գնալ.*
Полный шаг! (*հրամ.*) *Լիաքա՛յլ.*
Пол - оборота *Կէս դարձ, կիսադարձ*
Движение в пол-оборота *կիսադարձ շարժում.*
Повернуться в пол-оборота на право *դառնալ կէս աջ.* (*Կէս աջ (ձախ) դա՛րձ.*
Пол-оборота на право (на лево)! (*հրամ.*)
Пологий *Զառիկող, առիկող, թեթեւ զառիվայր կամ թեթեւ զառիվեր (ածակ.), ս.* отлогий
—ий берег *զառիկող ափ*
—ая насыпь *զառիկող հողաթումբ*
Пологость *Վարոկ, թեթեւ զառիվայր կամ զառիվեր (գոյ.)*
Положение *Դրութիւն* || *դիրք, վիճակ* || *կանոնադրութիւն. կանոնագիրք*
— взаимное *փոխադարձ դրութիւն*
— военное *պատերազմական դրութիւն*
— выжидательное *սպասողական դրութիւն*
— исключительное *բացառիկ դրութիւն*
— исходное *ելման դրութիւն, ելադրութիւն*
— наблюдательное *դիտողական դրութիւն*
— наступательное *յարձակողական դրութիւն*
— оборонительное *պաշտպանողական դրութիւն*
—ия общие *ընդհանուր դրութիւններ, ընդհանուր կանոններ*
(նադրութիւն
— об обучении роты *վաշտի ուսուցման կանո-*
— о ведении ротного хозяйства *վաշտի տնտեսութիւնը վարելու կանոնադրութիւն*

— о ветеринарном довольствии *անասնաբուժական բավարարման կանոնադրություն*

— о полевом управлении войск *զորքերի դաշտային վարչության կանոնադրություն*

Положительный *Դրական*

Положить *Դնել*, *ս.* полагать (*դնել*

— орудие на лафет *հրանոթը հրետասայլի վրա*

— оружие *զենքը վայր (ցած) դնել, անձնատուր լինել*

Полоса *Շերտ* (*շերտ*

— главной обороны *գլխավոր պաշտպանության*

— главного сопротивления *գլխավոր դիմադրության շերտ*

— действий *գործողությունների շերտ*

— железа *յերկաթի շերտ*

— заградительная *խափանիչ շերտ, փակոցների*

— наблюдения *դիտողության շերտ* (*գոտի*

— наступления *հարձակման շերտ*

— неподвижного (сторожевого) охранения *անշարժ (տեղապահման) պահպանության շերտ*

— прифронтовая *առճակատյա, ճակատամերձ*

— резервов *ռեզերվների շերտ* (*շերտ*

-сердцевинная — рассеивания выстрелов *ծիգերի ցրման միջուկաշերտ*

Полосатый *Շերտավոր, շեր-շերտ, զոլ-զոլ*

Полосовое железо *Շերտ յերկաթ*

Полость *Խոռոչ. փապ, փապար* (*խոռոչ*

— затыльника пулемета *գնդացրի ծոծրակալի*

Полотно *Քաթան. կտավ || լեր, լարկ || յերես*

— дороги *ճանապարհի լեր, լարկ || ճանապարհի յերես*

земляное — железной дороги *յերկաթուղու*

— знамени *դրոշի կտավ* (*ճողելեր, լարկ*

— моста, мостовое *կամրջի յերես*
— шоссейное *խճուղու լիր, լարկ*
Полубастион *Կիսաբաստիոն*
Полубатальон *Կիսագումարտակ*
Полубатарея *Կիսամարտկոց*
Полувзвод *Կիսադասակ*
Полувольт *Կես պտույտ (ձիու)*
Полугоспиталь *Կես-հիվանդանոց*
Полугоризонталь *Կիսահորիզոնական գիծ*
Полуградус *Կիսաաստիճան*
Полуденная линия *Միջօրեական գիծ*
Полу-закрытая позиция *Կիսածածկված դիրք*
Полукруг *Կիսաշրջան*
Полукруглый *Կիսակլոր*
—ый выем *կ. փորոք*
(խարտոց
—ый и прямой напилок *կիսակլոր յեվ տափակ*
Полумесяц красный *Կարմիր կիսալուսին, կար-*
Полуоборот *Կիսաշրջան*
(միր մահիկ
Полупереход *Կես օրվա գնացք, կես օրվա ճա-*
Полурота *Կիսավաշտ*
(նապարհ
Полуротный командир *Կիսավաշտի հրամանատար*
Полусапожка *Կոշիկ*
Полутопографическая (семитопографическая) кар-
та *Կես-տեղագրական քարտեզ*
Полутьма *Կիսախավար*
Полууглубленная батарея *Կիսախոր մարտկոց (խր-*
Получатель *Ստացող*
(ըամատ)
Полухехол *Կիսաշապիկ*
Получка *Ստացում || ստանալը, ստացք*
Полушубок *Կիսամուշտակ*

Пол-шага *Կես քայլ, կիսաքայլ*

В пол-шага! *(հրամ.) Կիսաքա՛յլ։*

Полюс *Բևեռ*

— отрицательный *բացասական բ.*

— положительный *դրական բ.*

Поляна *Բացատ (անտառի)*

Поместить, помещать *Տեղավորել, զետեղել*

Помета *Նշան (մի բանի վրա դրած, արած) ‖ նշա-
դրություն (բանի վրա). նշագրել*

Пометить, помечать *Նշան անել, նշան դնել (մի*

Помещение *Տեղավորում, զետեղում ‖ զետեղարան*

— жилое *բնակելի, մարդաբնակ զետեղարան, բնակության տեղ, բնակարան*

— караульное, караульня *պահականոց*

Помилование *Ներում, ներում շնորհելը*

Помогать, помочь *Օգնել*

Помойная яма *Կեղտաճոր*

Помост *Հատակվածք, տ.* мостить, выстилание,

Помочи *Տաբատակալ* (выстилать, выстилка

Помочная подпруга *Բեռան փորքաշ*

Помощник *Օգնական*

— врача *բժշկի օ.*

— лекарский (лекпом) *բժշկի օ.*

— наводчика *նշանառուի օ.*

— ротного командира *վաշտի հրամանատարի օ.*

Помощь *Օգնություն*

Первая — до прибытия врача *առաջին օգնություն՝ մինչև բժշկի գալը*

Подать — крепости. *բերդին օգնություն հասցնել*

Помятый патрон *Ծռված փամփուշտ*

Понижение *Ցածրացում, խոնարհում, իջնելը* ‖

— воды *ջրի նվազումը, քաշվելը* *(նվազում*

— оси цапф ниже оси орудия *դարձակների ա-ռանցքի խոնարհումը (իջնելը) հրանոթի* *(առանցքից ցած*

Понтон *Կամրջանավ*

Понтонер *Զոմաշեն*

Понтонерная часть *Զոմաշեն զորամաս*

Понтонный *Զոմի, զոմական, նավակամրջի*

—ый батальон, —ая команда, рота, часть *զո-մական գումարտակ, զորախումբ, վաշտ,* *(զորամաս*

—ая лодка *կամրջանավակ*

—ый мост *զոմ, նավակամուրջ*

—ый парк *զոմական պարկ, կամրջի կրանք, ա-* мостовой обоз

По-орудийно *Հրանոթ առ հրանոթ*

Справа по-орудийно! *(հրամ.)* *Աջից, հրա-նոթ առ հրանոթ.*

По-отделениям *Ջոկ առ ջոկ. ջոկավոր*

Строй взвода — *դասակի ջոկավոր դասաշար*

Поощрение *Խրախույս, խրախուսանք, քաջալե-րում, քաջալերություն* *(քաջալերական*

Поощрительный *Խրախուսական, խրախուսիչ. քա-*

Попадание *Ընկնելը ‖ դիպչելը, դիպնելը. դիպցը-նելը (նպատակին), խփելը (նշանին)*

— в плен *գերի ընկնելը*

— в цель *նպատակին դիպցնելը* *(նշին)*

— пуль *գնդակների դիպչելը (նպատակին, նշա-*

— снарядов *արկերի դիպչելը (նպատակին)*

Точка —ия *դիպչելու կետ*

Центր —ия *դիպչելու կենտրոն*

Поперек *Խոտորնակի, լայնակի, լայնությամբ, լայնքով*

— дороги, реки *ճանապարհի, գետի լայնքով, ճանապարհին, գետին խոտորնակի*

Ставить — *(մի բանի) լայնքով դնել, խոտորնակի դնել.*

Вдоль и поперек *երկայնքով ու լայնքով*

Попеременно *Փոփոխակի*

Поперечник *Տրամագիծ. տրամաչափ, տ.* диаметр

— круга, овала *շրջանի, ձվարդի տրամագիծ*

— снаряда *արկի տրամաչափ*

Поперечный *Խոտորնակ(ի), լայնակի*

—ый брус *գարձեկ (ծածկի)*

—ый винт *խոտորնակ պտուտակ*

—ая линия *խոտորնակ գիծ, լայնակի գիծ*

—ый масштаб, чертеж *խոտորնակ չափացույց, գծանկար*

—ый паз дульной накладки *փողաբերանի պահպանակի խոտորնակ, փորատ*

—ый разрез *խոտորնակ տրամատ, լայնակի տրամատ*

—ое сечение *խոտորնակ (լայնակի) հատված*

Пополнение *Լրացում, համալրում, տ.* комплектование

— войск *զորքերի լրացում, համալրում*

— ежегодной убыли лошадей *ձիերի տարեկան պակասի, պակասորդի լրացում, տ.* ремонт лошадей

— запаса патронов *փամփուշտի պաշարի լ.*

— потерь *կորուստների լ.*

Пополнить *Պակասը լրացնել, համալրել*

Попона *Սթար, ձիու ծածկոց*

Поправить равнение *Հավասարումն ուղղել*

Поправка *Ուղղում*

Вводить —ки в предварительные соображения *ուղղումներ մտցնել նախնական նկատառումների մեջ*

Поприще *Ասպարեզ*

— действия *գործողության ա.*

— деятельности *գործունեության ա.*

Попутный *ճանապարհի || ուղեկից, համընթաց*

—ый ветер *աջողակ քամի || ուղեկից, համընթաց քամի*

—ый город, пункт, —ое селение *ճանապարհի (վրա գտնվող) քաղաք, տեղ, գյուղ*

—ый лист *ուղեթերթ*

—ая тетрадь *ուղետետր*

—ый товарищ *ճանապարհի ընկեր, ուղեկից ընկեր*

Попытка *Փորձ. փորձելը*

— пленного бежать *գերու փորձելը փախչել, փախչելու փորձը*

—ки перейти в контр-атаку *հակագրոհի անցնելու փորձեր*

Поражаемость *Հարվածելիություն || հարվածականություն*

увеличить — нашего огня *մեր կրակի հարվածականությունը մեծացնել*

Поражаемое пространство *Հարվածելի տարածություն*

Поражение *Հարվածում. հարված || պարտություն*

— жестокое *խիստ, սաստիկ, ծանր պարտություն*

полное — неприятеля *թշնամու կատարյալ պարտություն*

— частное *մասնակի պարտություն*

Нанести — противнику *հակառակորդին հարված հասցնել.*

Переходить на — *հարվածման անցնել.*

Поразить, поражать Հարվածել, պարտել
— войско զորքը հարվածել. ջարդել
— неприятеля թշնամուն հարվածել, ջարդել,
— оружием զենքով հարվածել (պարտել
— цель նպատակը հարվածել
Поранение Վիրավորում
Порог Շեմք || շեմքը. շեմակալ (դռան շրջանակի)
Пороги Ջրավազ, բորվատ (գետի)
Порода горная Ապար (ապառաժ)
Породистая лошадь Ազնվատոհմ, ազնիվ ձի
Пором т. паром
По-ротно Վաշտ առ վաշտ || վաշտավոր || վաշտերով. վաշտ-վաշտ

Строй батальона — գումարտակի վաշտավոր զատաշար.

Батальоны развертываются — գումարտակները (բացա)զատվում են վաշտ առ վաշտ, վաշտ-վաշտ.

По-ротно стройся! (հրամ.) Վաշտավոր

Порох Վառոդ (զատաշար կազմի՛ր.
— бездымный անծուխ վ.
— белый սպիտակ վ.
— дымный ծխատու, ծխավոր վ.
— испорченный փչացած վ.
— круглый կլոր վ.
— крупнозернистый մեծահատիկ վ.
— медленного горения դանդաղ վառվող վ.
— мелкий մանր վ.
— пушечный թնդանոթի վ.
— ружейный հրացանի վ.

— угловатый անկյունավոր վ.
— хлопчато-бумажный բամբակի վ.
— цилиндрический գլանաձև վ.
Пороховница Վառոդաման
Пороховой Վառոդի
—ая бочка վ. տակառ
—ой газ վ. գազ
—ой завод վ. գործարան
—ой заряд վ. լից, վառոդային լից
—ая кишка վառոդալից խծուղ, տ. сосис
—ой магазин վառոդանոց, վառոդի համբարոց
—ая мельница վառոդաղաց, տ. бегуны
—ая мякоть վառոդափոշի
—ой нагар վառոդի այրուք
—ое оружие հրազեն
—ой погреб վ. նկուղ
—ое производство վառոդագործություն
—ой склад վ. պահեստ
—ой стопин վառոդի պատրույգ
Порошок Փոշի
— угольный ածխափոշի
Порт Նավահանգիստ
— военный ռազմական ն.
— коммерческий առևտրական ն.
Порто-франко Ազատ նավահանգիստ
Портупея Սուսերակալ
— плечевая ուսընդանութ ս.
— поясная գոտու ս.
Портфель Թղթակալ
Портянка Փաթալա, ոտքի փաթաթան

Поручение *Հանձնարարություն*
Порученъ *Բռնատեղ || բազրիք*
Поручик *Տեղակալ (սպայական աստիճան)*
Поручить *Հանձնել || հանձնարարել*
Порцион *Բաժին, օրապարեն,* т. паек || *բաժնե-*
Порционные деньги *Բաժնեդրամ* *(դրամ*
—ый скот *մսացու տավար*
Порция *Բաժին*
— больничная или госпитальная *հիվանդանո-*
— ежедневная *ամենօրյա բ.* *(ցայլին բ.*
— пищи *կերակրի բ.*
— провианта *պարենի բ.*
— фуража *խարի բ.*
Порча *Փչացում, փչացնելը*
— дорог *ճանապարհների փ.*
— казенного имущества *պետական գույքի փ.*
— орудий *հրանոթների փ.*
Поршень *Մխոց*
Поршневой *Մխոցային, մխոցաձև*
—ая батарея *մխոցային մարտկոց*
—ой запирающий механизм, —ой затвор *մխո-ցաձև փակիչ մեխանիզմ, մխոցաձև փա-կաղակ*
Порыв *Թափ. ավյուն. տապ, տապտապանք, յեռանդ || խոյանք, սլացք || պատառում || Թափ տալը*
— бешенства *մոլեգնության թափ. մոլեգնու-թյան ավյուն. մոլեգնությունը բռնելը*
— ветра *քամու թափ*
— воды *ջրի թափ*
— души *հոգու թափ, յեռանդ, խոյանք*

— наступательный, — наступления *հարձակողա-կան, հարձակման ժամի*

— на бой *թափ, պատրաստակամ մարտի համար,*

— речи *խոսքի հորձանք*

— стрелков вперед *հրացանաձիգների առաջխա-ղացում, առաջ նետվելը. առաջ սլացման ժամի պատրաստակամ*

Порываться *ձգտել, սլանալ (մի բանի վրա) || ջանալ, փորձել, տենչալ, պատրաստվել (մի բանի համար). անտեղի բաղձալ*

Порядок *կարգ*

— административный *վարչական կ.,*

В административном — ке *վարչական կարգով*

—ки артиллерии *հրետանու կարգեր*

— бивачный *բացօթեգային կ.* (*կարգ*

— боевой, — для боя *մարտական կ., մարտա-*

— вьючный, — для вьючного движения *գրաստա-վոր կ., գրաստավոր շարժման կ.*

— для движения *շարժման կ.*

— для стрельбы *հրաձգության կ.*

— конный *ձիային կ., հեծելակարգ*

— лагерный *ճամբարային կ.*

— маневренный *զորաշարժական կ.*

— наступательный *հարձակողական կ.*

— общественный *հասարակական կ.*

— общий *ընդհանուր կ.*, в общем — ке службы *ծառայության ընդհանուր կարգով*

— отступательный *նահանջի կ.* (*խմբության կ.*

— передвижения частей *զորամասերի տեղափո-*

— подчиненности *ստորադասության կ.* (*կարգով.*

В —ке подчиненности *ստորադասության*

Следующий в —ке подчиненности начальник *վերադասության կարգով հաջորդ պետը*

— полицейский *ոստիկանական կ.*

— походный *յերթակարգ*

— резервный *ռեզանդակի կ., ռեզանդակակարգ*

— укороченный *կարճացրած կ.*

— управления *վարչության կ., վարչակարգ*

— уширенный *լայնացրած կ.*

— фланговый *թևային կ.*

— этапный *ճանգրվանային կ.*

Порядочный *Կարգին. օրինավոր ‖ բավականաչափ, բավականին մեծ*

—ая часть *բավականին մեծ (ստվար) զորամաս*

Посадить войско на суда, в вагоны *Զորքը նավեր, վագոններ նստեցնել*

Посадка *Նստեցնելը, նստեցում ‖ նստվածք*

— прочная и правильная *հաստատ (պինդ) ձև կանոնավոր նստվածք (ձիավորի)*

Посвятить себя военной службе *Իրեն նվիրել զինվորական ծառայության*

Посемейный список *Ըստանեկան ցուցակ*

Посетитель *Այցելու*

Книга посетителей *այցելուների մատյան*

Посещение *Այցելություն. այցելելը, այցելում*

Посильность *Ըստուժի, ուժի համեմատ լինելը, ըստուժություն*

— задач, возложенных на роту *վաշտին հանձնած խնդիրների ըստուժի (ուժի համեմատ) լինելը, ըստուժությունը*

Посильный *Ըստուժի, ուժի համեմատ*

Послать *տ.* посылать

Последовательное захождение *Հաջորդական շրջում*
—ая оборона *հ. պաշտպանություն*
Последствие *Հետևանք*
Оставить без —ия *անհետևանք թողնել*
Послужной лист *Ծառայության թերթ*
—ой список *ծ. ցուցակ*
Посменно *Փոխփոխ, փոխանորդությամբ, հերթով*
Производить работу — *աշխատանքը փ., հերթով կատարել*
Посменный караул *Փոխանորդվող, փոխվող պահակ, տ.* сменный *հմմտ.* бессменный
Пособие *Նպաստ*
— денежное *դրամական ն.*
Поспешный *Շտապ, շտապովի*
—ый полевой мост *շտապ շինած, արագաշեն ռազմադաշտային կամուրջ*
—ое укрепление *շտապ շինած ամրություն*
Пост *Պոստ, պահակա* || *պահակետ. կայան, կայարան* || *պաշտոնատեղ, պաշտոն*
— извещательный *իմաց տվող, իմացարար պոստ, ի. պահակ*
— караульный *պահակապոստ, պահակետ*
— конный *ձիավոր պոստ, ձ. պահակ*
— летучей почты *թռուցիկ փոստի կայան*
— летучий *թռուցիկ պոստ, թ. պահակ*
— морской связи *ծովային կապի պոստ, պահակ*
— наблюдательный *դիտողական պոստ, դիտապոստ, դիտակայան*
— ночной *գիշերային պոստ, գ. պահակ*
— одиночный *միակի պոստ, մ. պահակ*

— парный *յերկակի պոստ, յ. պահակ*
— натронный *փամփուշտի կայան*
— передовой *առաջավոր պոստ, ա. պահակետ, առաջապոստ, ա.* аванпост, форпост
— пеший *հետիոտն պոստ, հ. պահակ*
повозочный — летучей почты *թռուցիկ փոստի (փոշտի) սայլակայան*
— подвижной *շարժական պոստ, շ. պահակ*
— почтовой линии *փոստի (փոշտի) կայարան*
— промежуточный *միջնական պոստ, մ. պահակ*
— самокатный, — на самокатах, на велосипедах *հեծանվավոր պոստ, հ. պահակ*
— сигнальный *ազդանշանի կայան, ազդակայան*
— укрепленный *ամրացրած պոստ, ա. պահակետ*

Вступить на пост *պոստն ստանձնել, պահակայի յելնել.*

Остаться на своем посту *իր պոստում, իր պահակետում մնալ.*

Принять пост *պոստը, պահակետն ընդունել.*
(կերից փոխել

Сменить с поста *պոստից փոխել, պահա-*

Сдать пост *պոստը, պահակետը հանձնել*
(պոստից, պահակետից

Снять часового с поста *ժամապահին հանել*

Сойти с поста *պոստից, պահակետից յելնել.*

Стоять на посту *պոստում, պահակետում*

Поставить *Դնել* *(կանգնել.*
— курок на первый (предохранительный) взвод *հրահանը դ. առաջին (պահպանիչ) վարքին, վարքի վրա*

— орудие на боевую линию *հրանոթը դ. մարտագծի վրա*

— пулеметное дело на должную высоту *գնդացրային գործը դ. պատշաճ բարձրության*

— часовых *ժամապահներ դնել* *(վրա*

Поставка *Դնելը* || *մատակարարում, մատակարարություն*

(բեր

— муки на войско *զորքին ալյուր մատակարա-*

Поставление на вид *Դիտել տալը (զանցանքը), մեկին դիտողություն անելը*

Поставщик *Մատակարար*

Постановить *Դնել, կարգել* || *վորոշել, սահմանել*

Постановка *Դնելը, կարգելը. դրում. դրվածք.*

— вопроса *հարց դնելը. հարցի դրում, դրվածք*

— первой смены часовых *առաջին պահի (հերթի) ժամապահներ դնելը, կարգելը*

— постов *պոստեր, պահականներ դնելը, կարգելը*

— приговора *դատավճիռ դնելը, վճռահատու-*

— прицела *նշանոց(ը) դնելը* *(թյուն*

— стрелкового дела *հրաձգական գործի դրում,*

— цели *նպատակ դնելը* *(դրվածք*

— часовых *ժամապահներ դնելը, կարգելը*

Постановление *Դնելը* || *դրում, դրմունք. վորոշում, կարգադրություն*

—ия военные *ռազմական որենքներ, տ.* законы

— особое *հատուկ-վորոշում* (военные

Постепенный *Աստիճանական*

—ая атака крепости *բերդի քայլառքայլ գրոհում, տ.* правильная атака

Постовой *Պոստավոր, պահակալ (պոստում, պահակետում կանգնող) || պոստային, պոստի, պահակային, պահակետի*

—ая будка *պոստի, պահակետի տնակ*

—ая ведомость *պոստի, պահակային տեղեկագիր*

—одежда *պոստի, պահակային հագուստ*

Постой *Օթևան || օթևաններ*

— военный (по обывательским домам) *զինվորականների օթևան, օթևաններ (մասնավոր տներում)*

— с приварком *օթևան կերակրով հանդերձ*

Поставить на постой *օթևանում տեղավորել.*

Стоять на постое, — постоем *օթևանել, օթևանում տեղավորված լինել, օթևանած լինել.*

Билет на постой *օթևանի տոմս.*

Постойная повинность *Օթևանի պարհակ, պար-*

Постоялый двор *Իջևան, խան* *(տիր*

Постоянность полета пули *Մնայունություն, մշտակայություն գնդակի թռիչքի*

Постоянный *Մշտական, մշտակա. մնայուն. հա-*

—ая армия *մնայուն բանակ* *(բանվ*

—ый ветер *մշտական քամի*

—ое войско *մնայուն զորք*

—ый госпиталь *մնայուն հիվանդանոց*

—ый командир *մշտական հրամանատար*

—ая командировка *մշտական գործուղում*

—ая милиция *մնայուն միլիցիա*

—ый мост *մնայուն կամուրջ*

—ый нейтралитет *մշտական չեզոքություն*
—ый огонь *հարատեւ, անընդհատ կրակ*
—ый прицел *մշտակա նշանոց*
—ая связь *հարատեւ, անընդհատ կապ*
ый состав *մնայուն կազմ*
—ая установка прицела *նշանոցի մշտական հա-*
Пострадать *Տուժել, վնաս կրել* *(տում*
—авшие части *տուժած զորամասեր*
Построение *Կազմություն, կազմելը ‖ շարում, շարվածք*
— боевого порядка *մարտակարգ կազմելը*
— взводами *դասակներով շարվածք, շարվելը*
— колонны *(զորա)սյուն կազմելը* *(կազմելը*
— колонны из рядов *յերկյակներից (զորա)սյուն*
-- наилучше удовлетворяющее условиям атаки *գրոհի պայմաններին ամենալավ կերպով բավարարող շարվածք* *(մելը*
— по ранжиру *հասակի կարգով շարվածք, շար-*
— пехотных соединений для смотров *հետեվակ միավորումների շարվածքը զորատե-սի համար*
-- шеренги *տողան կազմելը, տողանի շարվածք*
Построить *Շինել ‖ կազմել ‖ շարել*
— взвод в колонну по отделениям *դասակի ջո-կասյուն կազմել* *(հարդարել*
— к атаке *գրոհի համար շարել, գրոհի հակա*
— к сражению *ճակատամարտի համար շարել*
— поперечный масштаб *խաչաձեւակի չափացույց կազմել* *(մած, մարտակարգով շարված*
—енный в боевой порядок *մարտակարգ կազ-*

—енный глубоким (широким) фронтом *խոր (լայն) ճակատ կազմած*

—енный эшелонами *շարաններ կազմած*

Построиться к бою *Մարտի համար ճակատել, մարտի ճակատ հարդարել*

Постройка *Շինվածք*

— внутренняя *ներքին շ.*

— вспомогательная *օժանդակ շ.*

— главная *գլխավոր շ.*

— земляная *հողե շ.*

— лагерная *ճամբարային շ.*

— наружная *դրսի շ.*

— тыльная *թիկունքի շ.*

— с одеждою *պատվածքով շ.* (у оглобли

Постромка *Զգափոկ, արտիք, քաշիկ, ա.* лямка

— веревочная *պարանե արտիք, պ. քաշիկ*

— кожаная *կաշվե արտիք, կ. քաշիկ*

Поступать, —ить *Մտնել*

— в часть, в полк *մ. զորամասի մեջ, գնդի մեջ*

— на военную службу *մ. զինվորական ծառայության*

— на действительную службу из запаса *պահեստից գործոն ծառայության մտնել*

Поступление *Մտնելը*

Первоначальное — на военную службу *սկզբնական (առաջին անգամ) մտնելը զինվորա-*

Посылать *Ուղարկել* (*կան ծառայության*

— заряд *լիցքն առաջ մղել, անցք քշել*

— лошадь *ձին առաջ քշել, առաջ տալ*

— рукоятку вперед до отказа *կոթն առաջ մղել մինչև դեմ առնելը*

Посылка Ուղարկում, ուղարկելը ‖ ուղարկ (ուղարկած ամեն բան, բացի նամակից)
Посыльный Լրատար
— ежедневный ամենօրյա լ.
— конный ձիավոր լ.
— очередной հերթապահ լ.
— пеший հետիոտն լ.
— почетный պատվի լ.
— старший ավագ լ.
Потайной, потаенный Գաղտնի, ծածուկ, թաքցր- (րած
—ой выход գաղտնի ելք
—ой замок գաղտնի կողպեք
—ая лестница գաղտնի, ծածուկ սանդուղք
—ой фонарь գաղտալույս լապտեր, գողի լապտեր
Потерпеть неудачу, поражение, убыток Կրել՝ անհաջողություն, պարտություն, վնաս
Потертость ног Ոտքերի հարած լինելը, հարած տեղերը (կոշիկներից), տ. тереть
Потеря Կորուստ
—и массовые մասսայական կորուստներ
Нанести —и կորուստներ հասցնել
Нести —и կորուստներ կրել
Потерянный выстрел Կորած ձիգ
Потник Քրտնաքաշ (ձիու սարքի)
Потопать, потонуть Ընկղմվել, ջրասույզ լինել, սուզվել, խեղդվել (ջրի մեջ)
Потопить Վառել, տաքացնել
— комнату սենյակը վառել, տաքացնել
— печь վառարանը վառել
Потопить, потоплять Հեղձել, ջրասույզ անել, ընկղմել ‖ խեղդել (ջրի մեջ)

— местность *տեղանքը ծեծել*
Потрясать, потрясти *Ցնցել*
Морально — неприятеля *բարոյապես ցնցել*
Потрясение *Ցնցում* (*թշնամուն*
Похищение *Հափշտակություն*
Поход *Յերթ*, *ա.* марш || *ռազմ*, *ռազմերթ*, *ռազ-մական արշավանք*, *ա.* кампания
— боевой *ռազմերթ* (*ռազմ*
— военный *ռազմերթ*, *ռազմական արշավանք*,
— завоевательный *նվաճողական ռազմ*, *արշա-*
— крестовый *Խաչակրաց արշավանք* (*վանք*
— Суворовский *Սուվորովի արշավանք*
Выступить в поход *յերթի ելնել* || *ռազ-*
Походка *Քայլվածք* (*մերթի*, *ռազմի ելնել*
Походный *Յերթի*, *յերթական*. *ռազմերթի*
—ая аммуниция *յերթի հանդերձանք*
—ое движение *յերթական շարժում*
—ые деньги *յերթի դրամ*, *յերթադրամ*
—ый журнал *յերթի մատյան*
—ая застава *յերթի*, *յերթական ուղեկալ*
—ая колонна *յերթասյուն*
—ое крепление *յերթապնդվածք*
—ая кровать *յերթի*, *շարժական մահճակալ*
—ая кухня *յերթի*, *շարժական խոհանոց*, *յեփոց*
—ая кузница *յերթի*, *ռազմադաշտային դարբնոց*
—ый марш *յերթի քայլերգ*, *չուերգ*
—ые марши *յերթեր*, *յերթական շարժումներ*, *ա.* походное движение
—ый мундир *յերթի համազգեստ*

—ое положение *երթական դրություն*
—ое снаряжение *երթի հանդերձանք, տ.* походная аммуниция
—ая форма *երթի զգեստ, ր. տարազ*
В походную колонну стройся! *(հրամ.) Երթասյուն կազմի՛ր։*
В походную колонну шагом, марш! *(հրամ.) Երթասյուն, քայլով, մա՛րշ։*
Похоронный марш *Թաղման, հուղարկավորության*
Почва *Գետին* *(քայլերգ*
— болотистая *ճահճուտ, ճահճային գ.*
— глинистая *կավային, կավուտ գ., կավահող*
— каменистая *քարոտ, քարքարոտ գ.*
— неровная *անհարթ գ.*
— песчаная *ավազուտ գ.*
Почетный *Պատվավոր, պատվի*
—ый ассистент *պատվավոր ընթերակա*
—ая грамота *պատվի վկայագիր*
—ая, честная капитуляция *պարտավոր անձնա-*
—ый караул *պատվի պահակ* *(տվություն*
—ый конвой *պատվի ուղեկցորդ*
—ая медаль *պատվի մեդալ, պատվանշան*
—ое место *պատվավոր տեղ*
—ый часовой *պատվի ժամապահ*
Почин *Նախաձեռնություն*
— частный *մասնավոր ն.* *(խաձեռնությամբ*
По собственному —ну *իր անձնական նա-*
Починка *Նորոգում. կարկատում*
— одежды *հագուստի կարկատում*
— оружия *զենքի նորոգում*

— частей *մասերի նորոգում*

Почта *Փոստ (փոշտ), թղթատարություն*

— голубиная *աղավնու փոշտ, աղավնու թղթա-*

— легкая *թեթեվ փ.* *(տարություն*

— летучая *թռուցիկ փ.*

— тяжелая *ծանր փ.*

Почтовый *Փոստի (փոշտի), փոստային, թղթա-
տար, թղթատարական*

—ый голубь *թղթատար աղավնի*

—ая дорога *փոստի (փոշտի) ճանապարհ*

—ая корреспонденция *փոստային թղթակցու-*

--ая линия *փոստի գիծ* *(թյուն*

—ый служащий *փոստի ծառայող*

—ая станция *փոստի կայարան*

Пояс *Գոտի*

— ведущий (снаряда) *վարող գոտի (արկի)*

— горный *լեռնագոտի*

— дульный *փողաբերանի գոտի*, т. дульное

— спасательный *ազատարար գ.* (возвышение

Поясница *Գոտկատեղ*

Поясной *Գոտու || գոտկաչափ*

—ая бляха *գ. շիգդ*

—ая патронная сумка *գոտու փամփուշտի պա-*

—ая портупея *գ. սուսերակալ* *(յուսակ*

—ая цель *գոտկաչափի նպատակ, նշան*

Пра́вило *Կանոն*

Прави́ло *Ուղղյակ*

Пра́вильный *Կանոնավոր*

—ая атака, —ая осада *բերդի կ. (քայլարքայլ)
գրոհում, կ. պաշարում*

—ое положение ружей *հրացանների կ. դրություն*
—ая постановка прицела *նշանոցը կ. կերպով*
դնելը, ճիշտ հաստելը
—ое построение *կ. շարվածք*
—ая стойка *կ. կեցվածք*
Прави́льный *Ուղղեկավոր*
—ый номер *ուղղեկավոր համար*
Правительственный *Կառավարական, կառավար-*
Правительство *Կառավարություն* *(չական*
Правление *Վարչություն*
Право *Իրավունք*
— военное *ռազմական ի.*
— войны *պատերազմի ի.*
—а военнослужащих *զինվորականների, զինվո-*
րական պաշտոնյաների իրավունքները
— дисциплинарное *կարգապահական ի.*
— международное *միջազգային իրավունք*
Правофланговый *Աջաթևյան*
Правый *Աջ*
Правее! *(հրամ.) Յե՛փս աջ*
Практика *Գործնություն*
Практикант *Գործնակ*, —ка *Գործնուհի*
Практиковать людей *Գործնել, վարժեցնել զին-*
Практически *Գործնապես* *(վորներին*
Практический *Գործնական*
—ия занятия *գ. պարապմունքներ*
—ая стрельба *գ. հրաձգություն*
Прапорщик *Վառակիր*
— запаса *պահեստի վ.*

Превосходить, превзойти *Գերազանցել*
Превосходный *Գերազանց*
—-ые силы *գ. ուժեր*
Провосходство *Գերազանցություն* *(ություն*
— в силах, — сил *ուժերի գ., ուժերի գերակըշ-*
— огня *կրակի գ., կրակի գերակշռություն, ա.* перевес огня
— численное *թվական գ., թվական գերակշռու-թյուն, թվական առավելություն,* перевес численный
Превысить, превышать *Ավելի բարձր, բարձրա-ցույն լինել, ավելի վեր լինել || գերազանցել*
Превышение власти *Իշխանության վերազանցում*
— одной точки над другой *մեկ կետի բարձրա-դասությունը մյուսից, մեկ կետի ավելի բարձր լինելը քան մյուսը*
— траектории над линиею прицеливания *հետա-գծի բարձրադասությունը նշանառության*
Преграда *Արգելք* *(գծից*
—- естественная *բնական ա.*
— искусственная *արհեստական ա.*
Преградить, преграждать *Արգելք լինել. առաջը*
— дорогу *ճանապարհը կտրել* *(կտրել, փակել*
Предатель *Մատնիչ* *(մատնել*
Предать, предавать *Տալ, ավանդել. հանձնել ||*
— все огню и мечу *ամեն ինչ սրի ու հրի մատնել*
— город на разграбление *քաղաքը կողոպուտի մատնել* *(նել)*
— военному суду *ռազմական դատարանին մատ-*
—- суду *դատի մատնել*

Предварение *Կանխում*

Предварительно *Նախապես, առաջուց, կանխավ վաղորոք* || *(մի բանից) առաջ*

— атаки *գրոհից առաջ*

— осмотреть *նախապես զննել*

— составить план действий *առաջուց, կանխավ կազմել գործողությունների պլանը, ծրագիրը* *(նախապատրաստական*

Предварительный *Կանխական, նախնական* || *նա-*

—ый арест *կանխական կալանք*

—ое заключение *կանխական (նախնական) կալանք, բանտարկություն*

—ый знак *նախապատրաստական նշան*

—ое исполнение решения *վճռի կանխական կատարում, կանխակատարում*

—ая команда *նախապատրաստական հրաման*

—ые меры *առաջատման միջոցներ, կանխողական միջոցներ* *(հետախուզություն*

—ая разведка *կանխական, առաջուց կատարած*

—ое распоряжение *կանխական, կանխավ արած կարգադրություն* *(քննություն*

—ое следствие *նախնական քննություն, նախա-*

—ое соглашение *նախնական համաձայնություն*

—ые статьи к мирному договору *հաշտության դաշինքի նախահոդվածներ*

—ое условие *նախապայման*

Предварить *Կանխել, տ.* предупредить

— кого чем *կանխել (մեկին մի բանով), առաջ ընկնել (մեկից մի բանով), առաջ անել, կատարել (մեկից մի բան)*

— кого о чем *կանխել, առաջուց իմաց տալ, առաջուց հայտնել, կանխավ հաղորդել. իմացնել, նախապես ազդարարել, հայտնել, նախազգուշացնել (մեկին մի բան, մի բանի մասին) || նախապատրաստել (մեկին մի բանի համար), նախազգուշացնել*

— что чем *կանխել (մի բան), (մի բանի) առաջն առնել (մի բանով)*

— что *կանխել (մի բան), ընդառաջ գնալ, ընդառաջել (մեկի ցանկության, խնդրին), առաջուց կատարել. կանխահաս լինել, կանխահասնել*

— часть о предстоящих действиях *զորամասին առաջուց (նախապես) հայտնել առաջիկա գործողությունների մասին*

Предвидеть *Նախատեսել*

Предводитель *Առաջնորդ*

Предводить войском *Առաջնորդել զորքին*

Предгорье *Նախալեռներ, նախալեռնաստան*

Предгорный *Նախալեռնային*

Предел *Սահման*

—ы стрельбы *հրաձգության սահմաններ*

— вилки *ճանկի սահմաններ*

Предельный *Սահմանային || վերջնական, վերջնա-*

—ый возраст *վերջնական տարիք (կետ*

—ая дальность снаряда *արկի վերջնական հասողություն*

—ая дистанция *վերջնական հեռակայություն*

—ая ошибка *վերջնական սխալ*

—ое расстояние *վերջնական հեռավորություն*

—ая скорость снаряда *արկի վերջնակետ, վերջնական (առավելագույն) արագություն, ռ.* конечная скорость

—ый срок *վերջնական ժամկետ*

—ая цена *վերջնական գին*

—ый квартирный оклад *առավելագույն բնակարանային դրամ ‖ բնակարանային դրամի ամենաբարձր կարգ*

Предлог *Պատրվակ*

Предложение *Առաջարկ, առաջարկություն ‖ առաջադրություն*

— на перевозку команды *զորախմբի փոխադրության առաջարկ. պահանջագիր, ռ.* требование

Предложить, предлагать *Առաջարկել ‖ առաջա-*

Предметный *Առարկայական* *(դրել*

—ый визир, диоптр *ռ. տարադետ*

—ое стекло *ռ. ապակի (դիտակի), ռ.* об'ектив

Предмостное укрепление *Կամրջագլխի ամրություն, ռ.* тет-де-пон, головное укрепление

Преднамеренный *Մտադրված, նախամտածված*

—ый бой *նախամտածված մարտ*

—ое отступление *նախամտածված, նախապես մտադրած նահանջ*

Предостережение *Նախազգուշացում*

Предостеречь, предостерегать *Նախազգուշացնել*

Предосторожность *Նախազգուշություն*

—и военные *ռազմական նախազգուշություն*

Предотвратить, предотвращать *Կանխել, առաջն առնել (մի բանի). հեռացնել*

Прздохранитель Պահպանակ

Предохранительный Պահպանական. պահպանիչ

—ый взвод պահպանիչ փոր (հրացանի)

—ый винт պահպանիչ պտուտակ

—ое вооружение պահպանական սպառազէնք, սպառազինութիւն

—ый выступ курка հրահանի պահպանիչ ցցուն

—ая пробка պահպանիչ խցան

Предохранить (նախա)Պահպանել

— от пуль գնդակներից պ., պաշտպանել

Предписание Առաջագրութիւն, գրաւոր պատուէր, հրաման

Предписать Առաջագրել. պատուիրել, հրամայել

Предположение Ենթադրութիւն || մտադրութիւն. ծրագրում. ծրագիր, պլան

Предпочтение Նախապատուութիւն

Предприимчивый противник Ձեռներեց հակառա-
(կորդ

Предприниматель Ձեռնարկու

Предприятие Ձեռնարկութիւն

Предпринимать, предпринять Ձեռնարկել

Председатель Նախագահ

Представитель Ներկայացուցիչ, ներկայիչ

— военный զինուորական ն.

Представительство Ներկայչութիւն

— военное զինուորական ն.

— политическое քաղաքական ն.

Представить, представлять Ներկայացնել || առաջարկել || զեկուցել || պատկերացնել. յերեւակայել
(թյուն

— к наградам ներկայացնել ի պարգեւատրու-

— на усмотрение высшего начальства *ներկայաց-նել ի հայեցողութիւն բարձր վերապետի*

— к увольнению от службы *ներկայացնել ի արձակումն ծառայութիւնից*

Представление *ներկայացում. ներկայացնելը || զեկուցում || առաջադրութիւն || պատկե-րացում, գաղափար*

Составить общее — *ընդհանուր գաղափար կազմել.*

Входить с представлением по команде *հրա-մանատարութեան (վերադասութեան) կար-գով առաջադրել, առաջադրութիւն անել.*

Предупредительные меры *կանխողական, առա-ջառման միջոցներ*

(варить

Предупредить, предупреждать *կանխել, տ.* пред-

— преступления *յանցանքները կանխել, յան-ցանքների առաջն առնել*

Короткий отдых, во время данный, преду-преждает изнурение *ժամանակին տրւած կարճատեւ հանգիստ կանխում է ուժա-սպառութիւնը, ուժասպառութեան առաջն առնում է.*

Предупреждение *կանխում, առաջուց յայտ-նելը || նախազգուշացում || առաջառում, ա-ռաջն առնելը*

Предусмотрительность *նախատեսութիւն, նա-խահայեցութիւն*

Предусмотрительный командир *նախատես, նա-խահայեաց, հեռատես հրամանատար*

Предутренние часы *լուսադեմի ժամեր*

Преждевременный разрыв *Վաղաժամ պայթյուն*

Преимущество *Առավելություն*

Прекращение *Դադարեցում, դադարեցնելը*

— боя *մարտի դ.*

— огня *կրակի դ.*

Премия *Մրցանակ, վարձանակ*

Преобладание *Գերիշխում*

Преобразование *Փոխակերպություն. բարեփո-*

Преодоление *Հաղթահարում* (խուլթյուն

— искусственных препятствий *արհեստական խոչընդոտների հ.*

Препроводительная записка *Ուղարկագիր, ճշա-*

— ая бумага *ճշաթուղթ* (գիր

Препроводить этапным порядком *Ուղարկել ճան-գըրվանային կարգով*

Препятствие *Խոչընդոտ, արգելք*

— естественное *բնական խ.*

— искусственное *արհեստական խ.* (նալ

Препятствовать *Խոչընդոտ լինել, խ. հանդիսա-*

Прерывание боя *Մարտի ընդհատում, ընդմիջում*

Прерыватель тока *Հոսքի ընդհատիչ*

Прерывчатый *Ընդհատուն*

—ый боевой порядок *ը. մարտակարգ*

—ый огонь *ը. կրակ*

—ое расположение *ը. դասավորություն*

—ый фронт *ը. ճակատ*

Преследование *Հետապնդում, հալածում. հալածանք* || *հետամտություն*

Преследовать *Հետապնդել, հալածել* || *հետա-*

— неотступно *միալար հետապնդել* (մուտ լինել

— неприятеля по пятам կրնկակոխ հալածել թըշ-
— цель նպատակի ճշտամոտ լինել (նամուն
Пресная вода Անուշ ջուր
Пресс Մամուլ
— вальковый, — плющильный գլանամամուլ, տա-փակիչ մամուլ, տափակիչ գլանակներ, թիթեղոց, տ. вальки плющильные
— копировальный պատճենահան մամուլ
Прессовать Մամլել
Преступление Հանցանք
— воинское զինվորական հ.
— должностное պաշտոնի վերաբերյալ հ.
Преступник Հանցագործ
Преступный Հանցավոր, հանցական
—ое деяние հ. արարք, հանցագործություն
—ый приказ հ. հրաման (գատ
Претензия Պահանջանք ‖ հավակնություն ‖ գան-
— на дурное продовольствие գանգատ վատ պարենի համար
— на неудовлетворение положенным довольствием գանգատ սահմանված բավարարությունը չստանալու համար
Прибавка Հավելում
— к окладу жалования ռոճիկի կոպարի հ. ‖ ռոճիկի հ.
— к окладу квартирных денег բնակարանային դրամի կոպարի հ. ‖ բնակարանային դրամի հ.
Прибавить Ավելացնել
— аллюр, ход лошади ձիու քայլը արագացնել
Прибавь! (հրամ.) Արագացրո՛ւ:
Прибить заряд до места Լիցքը տեղը քշել, խցկել, տ. досылать, посылать заряд

Прибойник Խզկան
Прибор Պարագայր. սպաս ‖ անոթ, գործիք
— для набивки лент пулемета գնդացրի ժապա-
վեններ լցնելու անոթ
— копировальный պատճենահանության գործիք
— ранечный պարկի պարագայք
— распылительный փոշիացնող անոթ. գործիք
— ружейный հրացանի պարագայք
— столовый սեղանի պարագայք, սպաս
— хирургических инструментов վիրաբուժական
գործիքների սպասատուփ
— чайный թեյի պարագայք, սպաս
— шорный (կաշվե) լծասարքի պարագայք
Ранец с прибором պարկ իր պարագայքով.
Барабан с прибором թմբուկ իր պարա-
Прибрежная полоса Առափնյա շերտ (գոյքով.
Прибылая вода Վարարած, հորդացած ջուր
Прибытие Ժամանում
пункт —ия ժամանումի տեղ
Прибыть Ժամանել ‖ ավելանալ ‖ վարարել, հոր-
Привал Դադարք (դանալ
— большой մեծ դ.
— кратковременный կարճատև դ.
— малый փոքր դ.
Приварок Այնուր
Приварочные деньги Կերակրադրամ
—ое довольствие կերակրի բավարարություն
Привиллегированное сословие Արտոնյալ դասա-
Привиллегия Արտոնություն (կարգ
Привлечь, привлекать Քաշել (դեպ իրեն), գրավել

— внимание *ուշադրությունը դրավել*
— внимание на путь движения *ուշադրությունը դարձնել շարժման ճանապարհին*
— к ответственности *պատասխանատվության կանչել*
— к работе *աշխատանքի մեջ քաշել. բանի դը-*
Приводить, привести *Բերել* *(նել*
— в горизонтальное положение *հորիզոնական դրության բերել, դրության մեջ դնել*
— в известность *հայտարարել* *(ծադրել*
— в исполнение *կատարածել. կատարել, գոր-*
— в оборонительное состояние *պաշտպանողական վիճակի վերածել, վիճակի մեջ դնել*
— лафет в срединное положение *հրետասայլը միջին դրության բերել*
Приводный ремень *Շարժանցորդ փոկ*
Привязной воздушный шар *Կապովի, պարանավոր օդապարիկ, տ* аэростат
Пригибаться *Կռանալ*
Перебегать пригибаясь *կուզեկուզ վազել մի տեղից մյուսը*
Пригнать, пригонять *Քշել-բերել, տեղը քշել* || *հար-*
— одежду *հագուստը հ.* *(մարել*
— снаряжение *հանդերձանքը հ.*
— стремена *ասպանդակները հ., հարմարեցնել*
— шашку *Թուրը հ.*
— шлем *կոդակը հարդարել*
Пригонка *Հարդարանք, հարդարվածք* || *տեղը քը-շելը, տեղը գցելը*
— походного снаряжения *յերթի հանդերձանքի հ.*
— трубки *փողակը տեղը գցելը*

— шинели *գրատի ն.*

Приговор *Դատավճիռ*

Приграничная полоса *Սահմանամերձ շերտ*

Прием *Ընդունում. ընդունելը. ընդունելություն ‖ ձեվ, յեղանակ ‖ վարարկ, նվագ, ժամա-նակ, տ.* темп

—ы быстрого движения по ходам сообщения *Խրա-մուղիներով արագ շարժվելու յեղանակներ*

—и проба орудий *Հրանոթներ ընդունելն ու փորձելը*

— караула *պահակի ընդունում*

— „на караул“ *«պատվի առ» վարարկ (հրացանի)*

— „на ремень“ *«ուսնիվար» վարարկ*

— на службу *ծառայության (մեջ) ընդունելը.*

—ы обучения *ուսուցման յեղանակներ*

—ы при заряжании орудия *հրանոթ լցնելու վարարկներ, նվագներ* *(ներ, տ.* темп

—ы ружейные *հրացանի վարարկներ, ն. նվագ-*

—ы сабельные *Թրի վարարկներ, Թրի նվագներ*

—ы саблей для ударов *Թրի վարարկներ, նվագ-ներ՝ հարվածելու համար*

—ы шпагой для уколов *սուսերի վարարկներ, նվագներ՝ խիթեր անելու համար*

От ноги на руку ружье берется в один прием *Հրացանը վոտքից ձեռքի առնվում է մի նվագով (մի վարարկով).*

Заряжать в пять приемов: изготовься! открыть затвор! вложить патрон! закрыть затвор! целься! *լցնել հինգ նվագով (հինգ վարարկով)՝ պատրա՛ստ. փականակը բա՛ց.*

փամփուշտը դի՛ր. փակաղակը գոցի՛ր. նը-շա՛ն։

Вынимать шашку в три приема Թուրը հանել յերեք նվագով.

Приемник пулемета Գնդացրի ընդունարան

Приемный билет госпиталя Հիվանդանոցի ընդունելության տոմս

—ый день ընդունելության օր

—ая комиссия ընդունող հանձնախումբ

—ый покой հիվանդների ընդունարան

—ая роспись ընդունելության ցուցակ

—ый формулярный список ընդունելության վիճակագիր

Приемо-поверочная комиссия Ընդունող յեվ ստուգող հանձնախումբ

Приемо-сдаточная ведомость Ընդունելու յեվ հանձնելու ցուցակ

Приемщик Ընդունիչ

— артиллерийский հրետանու ը.

— войсковой զորական ը.

— сигналов ազդանշանների ը.

Прижать Հուպ տալ, սեղմել

— неприятеля к реке Թշնամուն սեղմել գետին

Приз Ան., մրցանակ ‖ նավառ

— за стрельбу հրաձգության մրցանակ

— скаковой ձիարշավի մրցանակ

Призвать, призывать Կանչել

— к оружию զենքի կանչել, զինակոչել

— на военную службу զինվորական ծառայու-(թյան կ.

— на помощь օգնության կ.

Призматической клин *Պրիզմաձև սեպ*

—, призменный бинокль *պրիզմավոր բինոկլ, պ-*
  յերկդիտակ

Признак *Հատկանիշ* (*նախկանոր*

Призовой *Նավատական մրցանակային. մրցա-*

—ые деньги *նավատական, մրցանակի դրամ*

—ой суд *նավատական դատարան*

—ая стрельба *մրցանակավոր հրաձգություն*

Призыв *Կոչ, կանչելը* ‖ *զորակոչ*

— досрочный *վաղաժամ, վաղակետ զորակոչ*

— к воинской повинности *զորակոչ*

— к оружию *զինակոչ*

— запасных на действительную службу *պահես-*
  տիններին գործոն ծառայության կանչելը,
  պահեստինների զինակոչ

— новобранцев *նորազենների զորակոչ*

— под знамена *դրոշի տակ կանչելը, զինակոչ*

  Новобранец (запасной) призыва 1920 года
  1920 թվականի զորակոչի նորազեն (պա-

Призывник *Զորակոչիկ* (*ճեստի*

Призывной *Զորակոչի, զորակոչական*

—ой возраст *զորակոչական տարիք*

—ой пункт *զորակոչի տեղ, կայան*

—ой список *զորակոչի ցուցակ*

—ой участок, —ой район *զորակոչի շրջան*

Приказ *Հրաման* (*ման, տ.* диспозиция

— боевой, для боя *մարտական, մարտի հրա-*

— военный *ռազմական հրաման*

— (по) артиллерии *հրաման հրետազորին. հրե-*
  տազորին տրված հրաման, հրետազորի
  հրաման

— (по) гарнизону *հրաման կայազորին. կայազորին տրված հ.*

